

Վանիկ Հ. Վիրաբյան  
Պատմ. գիտ. դոկտոր

**ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԵՎ ՍԱԴՐԻԻՉ-ԴԱՎԱԴՐԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
1920-1922 ԹԹ.\***

**Բանալի բառեր** – Թուրքիա, Հայաստան, հատուկ ծառայություններ, Վրաստան, Թիֆլիս, ներկայացուցչություն, տեղեկություն, ռազմական ներկայացուցիչ, կցորդ, հյուպատոս, լրտես, Անդրկովկաս, Երևան, Արտակարգ հանձնաժողով:

Մեզանում որոշ չափով լուսաբանված է թուրք-մահմեդական գործակալների և լրտեսների գործունեությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, սակայն Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդած ժամանակահատվածի մասին մեր հասարակությունը բավարար չափով իրազեկված չէ:

Քեմալական Թուրքիան և բոլշևիկյան Ռուսաստանը 1920 թ. վերջերից մինչև 1922 թվականը փորձել են ազդել խորհրդայնացած, բայց դեռևս իր ձևական անկախությունը պահպանած Հայաստանի ու նրա շուրջը ծավալվող իրադարձությունների վրա՝ իրենց գաղտնի ծառայությունների միջոցով մշտապես տեղեկացված լինելով այնտեղ ընթացող գործընթացների մասին: Տարբերությունը միայն այն էր, որ Խորհրդային Հայաստանի անվտանգության համակարգի ձևավորումը և հետագա կայացման գործընթացը մշտապես վերահսկվել են ՌԽՖՍՀ համապատասխան մարմինների կողմից, որոնք ուղղորդել են այդ ուղղությամբ ընթացող աշխատանքները:

Հայտնի է, որ 1920 թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև գինադադարի հայտարարումից հետո Երևանում ստեղծվել էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արևելյան ռազմաճակատի հրամանատարության ներկայացուցչությունը, որը օժտված էր քաղաքական լիազորություններով: Խորհրդային Հայաստանում Թուրքիայի լիազոր-ներկայացուցիչն էր կապիտան Բահիադդինը (Բեհաեդդին), որի մանդատի

Ժ (ԺԶ) քառի, թիվ 2 (62), ապրիլ-հունիս, 2018  
ՎԿՎ համահայկական հանդես

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 26.05.2018:

վրա գրված էր. «Թուրքիայի և Հայաստանի դաշնագրի (Ալեքսանդրապոլի պայմանագիրը – Վ. Վ.) մի քանի կետերի հետապնդման համար Երևանում, որպես Արևելյան բանակի սպա նշանակել կապիտան Բեհաէդդինին»<sup>1</sup>:

Այս ներկայացուցչությունը շարունակեց գործել նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ ընդհուպ մինչև 1923 թ. սեպտեմբերը, երբ վերածվեց հյուպատոսության: 1922 թ. փետրվարի 7-ի դրությամբ Թուրքիայի ներկայացուցչությունը Երևանում ուներ 11 աշխատակից, այդ թվում 6 ասկյար (ներկայացուցչության պահակախումբը), ավտովարորդը և նրա օգնականը: Թուրքական հյուպատոսական ներկայացուցչության բոլոր աշխատակիցները թուրքահպատակներ էին, բացի վարորդից<sup>2</sup>:

Թուրքական հյուպատոսական ծառայություն գոյություն ուներ նաև Ալեքսանդրապոլում, որն այնտեղ սկսեց գործել թուրքական զորքերի պարտադրված հեռացումից հետո: Այստեղ ևս թուրքական հյուպատոսությունը զբաղվում էր լրտեսական-քայքայիչ գործունեությամբ: Թուրքական հյուպատոսության և առհասարակ Թուրքիայի ծավալած գործունեության բացահայտմամբ շահագրգռված էին խորհրդային հետախուզական մարմիններն Անդրկովկասում: Մասնավորապես կարևորվում էր խորհրդային ռազմաքաղաքական ներկայացուցչությունների, հատուկ ծառայությունների և ռազմական կցորդների ծավալած աշխատանքը անդրկովկասյան երկրամասի կենտրոնում՝ Թիֆլիսում, որտեղից ձեռք էին բերվում կարևոր տեղեկություններ Թուրքիայի ռազմաքաղաքական պլանների և Հայաստանի, Վրաստանի ու Հյուսիսային Կովկասի մասին:

Կարևոր է նշել, որ թուրքական հյուպատոսական ներկայացուցչությունը առավել անպատկառ և սադրիչ բնույթի գործունեություն ծավալեց հատկապես ՀՅ Դաշնակցության գլխավորած 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ: Քաղաքական այդ պահը միանգամայն կարևորվում էր, քանզի հենց այդ նույն ժամանակ Մոսկվայում ընթանում էին խորհրդային թուրքական բանակցություններ, որոնցում քննարկվող հարցերի մեջ Հայաստանը կարևոր տեղ էր զբաղեցնում, և կար այդ կոնֆերանսին ՀԽՍՀ մասնակցության խնդիր: Փաստերի համադրումից ակնհայտ է դառնում, որ դրանից հետո էլ Հայաստանում քառսային և խառնաշփոթ վիճակի ստեղծումը միանգամայն ձեռնտու էր Թուրքիային և նրա հատուկ ծառայություններին: Ուստի Թուրքիան, օգտվելով Հայաստանի տարածքում իր ներկայությունից, հյուպատոսական ծառայության և նրա շուրջ վլխտացող լրտեսական-գործակալական ցանցի միջոցով դավադիր-քայքայիչ գործունեություն էր ծավալել: Դրան հակազդելու նպատակով թե՛ Խորհրդային Հայաստանի և թե՛ Ռուսաստանի գաղտնի հետախուզական մարմինները 1920-1922 թթ. որոշակի հակաքայլեր ձեռնարկեցին: Մասնավորապես Ռուսաստանը, գործելով գերգաղտնի, Հայաստանում ստեղծեց իր գործակալական ցանցը, որի հետ հավանաբար հայկական խորհրդային հատուկ ծառայությունները համապատասխանեցնում էին իրենց գործողությունները: Թիֆլիսում ՌԽՖՍՀ ռազմական ներկայացուցիչ, գեներալ Պ. Միտինը այդ

1 Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 87:

2 Տես ՆՍԱԿԻ Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը. 1920-1922, Եր., «Միտք» հրատ., 1967, էջ 400:

կապակցությամբ նշել է, որ արդեն 1920 թ. դեկտեմբերին – 1921 թ. սկզբին իրենք Անդրկովկասում և նրա շուրջ ունեին իրենց գործակալական ցանցը՝ ըստ որի Հայաստան էին ուղարկվել Պոգոբեդովը և Լիտվինովը, հայկական միսիա՝ Թաիրովը և Չույկովը, Թիֆլիս՝ Մարկովը, Վասիլևը, Նորդմանը, Յունատովը, Խոմյակովը, Պրժեբիտիսկին, Կոսիվը, Ռեդլիխը, Ջաբելսկին, Ռեմեզովը, Վոլմանը, Կոստևը, Սեմյոնը, Կարցևը, Սարիչևը, Ախալցխա՝ Բախրաձեն, Ախալքալաք՝ Գրիգորև... Կ. Պոլիս՝ Դոլինը, Թիֆլիսում ֆրանսիական ներկայացուցչություն՝ Ժուրավյովը, Լևչենկոն, Իվանովը, իսկ անգլիական՝ Պետրովիչը և այլն<sup>3</sup>: Գործակալական այդ ծավալուն ցանցի մեջ ընդգրկված հետախուզական հատուկ ծառայությունների գլխավոր նպատակադրումը դարձավ Անտանտի, Թուրքիայի, Ադրբեջանի և այլ երկրների կողմից ձեռնարկվող քայլերի մասին օպերատիվ տեղեկատվության ձեռքբերումը, որում կարևոր տեղ էր հատկացվում նաև Խորհրդային Հայաստանին և նրա դեմ ձեռնարկվող թուրք-ադրբեջանական քայքայիչ լրտեսական գործողություններին:

Դա հաստատվում է ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի 1921 թ. սեպտեմբերի 17-ի տեղեկատվությամբ, որը վկայում է Հայաստանի նկատմամբ Թուրքիայի նկրտումների մասին: Արտակարգ հանձնաժողովի անփոփազրից ակնհայտ է դառնում առաջին հերթին այն հանգամանքը, որ այդ պահին Թուրքիայի հետ ՀԽՍՀ սահմանի պահպանությունը շատ թույլ էր և սահմանակետերը չէին նկատվում, շատ դեպքերում էլ գտնվում էին միայնակ զգալի հեռավորության վրա, և երկրորդ՝ շատ ասկյարներ, խախտելով ՀԽՍՀ սահմանը, ներթափանցում էին Ադրբեջան<sup>4</sup>, ինչին նպաստում էր Հայաստանում թուրքական դիվանագիտական ներկայացուցչությունը: Իսկ արդեն ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի 1921 թ. նոյեմբերի 15-ի անփոփազրից պարզ է դառնում, որ Թուրքիան ի դեմս մուսավաթականների՝ հակահայկական իր գործունեության ասպարեզում ուներ հուսալի աջակիցներ, որոնք, իրենց հենակետը ունենալով Թուրքիայում, ծրագրել էին պլանաչափ ընդհատակյա աշխատանքներ ծավալել Կովկասում<sup>5</sup>, և անշուշտ, առաջին հերթին՝ Խորհրդային Հայաստանի տարածքում:

Սա ցույց է տալիս, որ **Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ մնում էր անփոփոխ**: Քեմալականները, օգտվելով իրենց համար ստեղծված նպաստավոր իրավիճակից, բոլոր ջանքերը գործադրում էին՝ դեռ 1920 թ. դեկտեմբերի կեսերին Հայհեղկոմից պահանջելով չխոչընդոտել զգալի քանակությամբ ձիերի և ռազմամթերքի տեղափոխումը Իգդիր ու միաժամանակ անարգել պարեն էին ձեռք բերում թուրքական բանակի համար<sup>6</sup>: Դրան փորձեց ընդդիմանալ Խորհրդային Հայաստանի Արտգործժողովում Ալ. Բեկզադյանը, որը Հայհեղկոմի անունից բողոքագիր ներկայացրեց ՌԿ(Բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյին: Նա անթույլատրելի և անհիմն էր համարում թուրքական հրամանատարության հետ Հայաստանի նախորդ

3 Տե՛ս Գանն **А. В.**, Советская военная разведка в Грузии в 1920–1921 годах. Миссия Павла Сыгина. Տե՛ս Государственное управление. «Электронный вестник». 2014 г., апрель, N 43, с. 223:

4 Տե՛ս Վիրաթյան **Ա.**, ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի տեղեկատվական գործունեությունը 1921 թ. հուլիս-դեկտեմբեր ժամանակաշրջանում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2017, N 125, էջ 130:

5 Տե՛ս սույն տեղում, էջ 143:

6 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 6, թ. 20:

կառավարության կնքած պայմանագրի կատարումը, և խնդրում էր, որ Ս. Օրջոնիկիձեն այդ կապակցությամբ արտահայտեր իր որոշակի վերաբերմունքը<sup>7</sup>:

Հայաստանի նկատմամբ Թուրքիայի սադրիչ-լրտեսական և դավադիր գործունեության գլխավոր հանգուցակետը Երևանում գտնվող թուրքական ներկայացուցչությունն էր: Թուրքական ներկայացուցչության թշնամական-դավադիր գործելակերպը դրսևորվում էր նրանում, որ ոչ հազվադեպ թուրքական պաշտոնական անձանց և թուրքահպատակների կողմից սահմանակետը անցնելու, Խորհրդային Հայաստանի տարածքում տեղաշարժերի, տարբեր ապրանքների և այլ բեռների փոխադրման ժամանակ կոպտորեն ոտնահարվում էին դիվանագիտական նորմերը և ՀԽՍՀ օրենքները, որոնք էլ հաճախ հանգեցնում էին բախումնային իրավիճակների առաջացմանը: Դրանով իսկ ոտնահարվում էին Հայաստանի սուվերեն իրավունքները: Առավել ևս, երբ թուրքական ներկայացուցչությունը իրեն իրավունք էր վերապահում իր հովանու տակ առնելու Հայաստանի տարածքում բնակվող մահմեդական բնակչությանը, այդ թվում՝ նրանց շրջանում ստեղծելով գործակալական ցանց, որի վերջնականպատակը Հայաստանի պետականության հիմքերի խարխուլումն էր: Այլ կերպ ասած, Հայաստանում թուրքական հյուպատոսական ծառայությունները, քողարկվելով դիվանագիտական անձեռնմխելիության անվան տակ, այդ օրերին ևս ծավալվել էին հակահայկական գործունեություն:

Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի միջև բախումնային իրավիճակների առաջացման առիթ դարձավ նաև այն հանգամանքը, որ Ալեքսանդրապոլի թուրքական հյուպատոսական ներկայացուցչությունը հավակնություն ներկայացրեց օգտվելու ծածկագիր-հեռագրերի և գաղտնի ծրարների միջոցով գործելու իրավունքից, ինչը իր կողմից ծավալված լրտեսական-հետախուզական գործունեությունը քողարկելու նպատակ էր հետապնդում: Բնականաբար, այդ ամենին իրագեկված ՀԽՍՀ կառավարությունը մերժեց թուրքական կողմի նման երկդիմի պահանջը: ՀԽՍՀ Արտաքին գործերի ժողկոմատը Երևանում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության ներկայացուցչությանը ուղղված դիմումագրում հիշեցնում էր Ալեքսանդրապոլի թուրքական հյուպատոսության կողմից «Հյուպատոսական ներկայացուցչությունների» մասին դեկրետի սկզբունքների հարգման անհրաժեշտության մասին<sup>8</sup>:

Քանի որ Հայաստանում գործող թուրքական հյուպատոսական ներկայացուցչությունը հաճախակի խախտում էր օրենքները, պաշտոնատար անձինք ոտնձգություններ էին կատարում Հայաստանի անվտանգության դեմ, հայկական խորհրդային իշխանությունները հարկադրված էին թուրքական ներկայացուցչության դեմ ձեռնարկել կոշտ մեթոդներ: Մասնավորապես Խորհրդային Հայաստանի ներքին գործերին անօրինական միջամտության համար որոշվեց կիրառել արգելափակիչ գործողություններ, քանի որ թուրքական ներկայացուցչությունը թշնամական կեցվածք էր ընդունել՝ փորձելով հրահրել հակախորհրդային ելույթներ, քաղաքացիական պատե-

7 Տե՛ս նույն տեղում, թ. 32-34:

8 Տե՛ս **Եսայան Ա.**, նշվ. աշխ., էջ 402:

րազմ: Հենց այս բոլոր հանգամանքներն էլ պարտադրեցին, որ Երևանում թուրքական կառավարության ներկայացուցիչ Բահհադինը (Բեհաէդդինը), Խորհրդային Հայաստանի կառավարության և Արտգործառնականության կողմից հայտարարվեց persona non grata (անցանկալի անձ) և դրա հիման վրա վերջինս ազատվեց հյուպատոսի իր պաշտոնից:

Խորհրդային Հայաստանի հատուկ ծառայությունների, ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի ջանքերով ակնհայտ էր դարձել, որ թուրքական հյուպատոսության ներկայացուցիչները, հենվելով իրենց կողմից ստեղծված գործակալական ցանցի վրա, զբաղվում են լրտեսական-դավադիր գործունեությամբ: Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը, հանրապետության ժողովրդի նախագահության՝ 1921 թ. հոկտեմբերի 7-ի որոշման հիման վրա՝ թուրքական ներկայացուցչության աշխատակից Բաշիր Գուլբատ-օղլիին մեղադրեց կողոպուտի և լրտեսության մեջ և նա վտարվեց ՀԽՍՀ սահմաններից դուրս<sup>9</sup>:

Խորհրդային իշխանության դեմ իր ծավալած լրտեսական գործունեությանը հատկապես աչքի ընկավ Ալեքսանդրապոլում գտնվող 11-րդ բանակին առընթեր թուրքական գլխավոր հրամանատարի ներկայացուցիչը: Այս կապակցությամբ Հայաստանում տեղակայված ռուսական զորախմբի պետ Մ. Վելիկանովին 1921 թ. հունիսի 6-ին ուղղված նամակում ՀԽՍՀ Արտգործառնականությանը հայտնում էր. «Ալեքսանդրապոլում 11-րդ բանակին կից թուրքական գլխավոր հրամանատարի ներկայացուցիչ կապիտան Թեվֆիկը իր ծառայողների ամբողջ հաստիքով զբաղեցնում է Ալեքսանդրապոլի կայարանի շենքը, թեև նրա համար շենք է հատկացված քաղաքում:

Չնայած երկաթուղայինների, քաղաքային և զինվորական իշխանությունների բազում պահանջներին՝ կապիտան Թեվֆիկը հրաժարվում է ազատել կայարանի շենքը: Նրա այդ համառությունը հարկադրում էր մտածել, որ նա չի կամենում թողնել լրտեսական ծառայության համար միանգամայն հարմար այդ կետը, քանի որ նրա աչքերի առաջ էր կատարվում գործերի, պարենի տեղաշարժը և այլն: Բացի այդ՝ իրավունք ունենալով իր մոտ ունենալու 12 հոգուց բաղկացած պահակախումբ, նա իրականում ունի մի քանի հարյուր ասկյար՝ դասալիքների անվան տակ, որոնք քաղաքում և Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում իբր թե թաքնվում են թուրքական իշխանություններից»<sup>10</sup>:

Մի շարք փաստաթղթերի քննական ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ չափազանց կարևոր այս ժամանակահատվածում չնայած 1921 թ. Մոսկվայում և Կարսում ձեռք բերված պայմանավորվածություններին՝ թուրք գործակալները բավականին լայնածավալ գործունեություն էին ծավալել Խորհրդային Հայաստանի տարածքում՝ ոչ միայն կոպտորեն խախտելով հայկական խորհրդային պետության օրենքները, այլև փորձելով դրանք հարմարեցնել իրենց հետամտած թշնամական նպատակադրումներին: Մասնավորապես, արխիվների չափազանց սուղ տվյալներից հայտնի է դառնում նրանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից Թուրքիա զենքի ու զինամթերքի անօրինական տեղափոխման մասին՝ լայ-

9 Տե՛ս նույն տեղում, էջ 403:  
10 ՀԱԱ, ֆ. 114, ց. 4, գ. 21, թ. 45:

նորեն օգտագործելով Երևանում թուրքական ներկայացուցչության հնարավորությանները, դիվանագիտական անձեռնմխելիության հանգամանքը և այլ գործոններ:

Հայաստանում թուրքական լրտեսների ծավալած քայքայիչ գործունեության մասին հետաքրքիր փաստեր կան ՀԽՍՀ Արտգործժողկոմի 1922 թ. մարտյան տեղեկագրում: Դրանում Արտաքին գործերի ժողկոմը փաստեր էր բերում Երևանում թուրքական ներկայացուցիչ Մուհադդին բեյի լրտեսական-հետախուզիչ գործունեության մասին<sup>11</sup>: Սույն փաստաթղթից տեղեկանում ենք Ալեքսանդրապոլի սահմանակետի շուրջ ծավալված իրադարձությունների, թուրքական գնացքների և դրանց ուղևորների խուզարկման արդյունքների մասին, որոնք վկայում էին թուրքերի կողմից ծավալած լրտեսական-մաքսանենգ գործողությունների մասին: Սակայն թուրքական ներկայացուցչությունը, լկտիաբար ժխտելով առկա փաստերը, նույնիսկ իրեն իրավունք էր վերապահում հանդես գալու բողոքագիր-նոտայով: Այդ մասին է վկայում Երևանում Թուրքիայի ներկայացուցիչ Մուհադդինի բողոքի նոտան՝ ուղղված ԽՍՀՄ Արտգործժողկոմին, որտեղ նա անգամ իրեն թույլ էր տվել մի շարք միանգամայն անթույլատրելի և անվայելուչ արտահայտություններ<sup>12</sup>: ՀԽՍՀ Չեկայի գործակալների մանրակրկիտ պրպտումից հաստատապես պարզվել էր, որ Թուրքիայի ներկայացուցչությունը լայն ծավալներով զբաղվել է զենքի առևտրով և պաշտոնական գործուղումների քողածածկույթի տակ ու հանձնակատարների միջոցով զենքը ուղարկել է Իգդիր: Փաստաթղթում նշվում էր այն կարևոր հանգամանքի մասին, որ գործուղվող անձինք մշտապես հատել են հայ-թուրքական սահմանը և Թուրքիա են մեկնել զենքով, սակայն վերադարձել են անզեն: Պետանվտանգության մարմինների կողմից ստույգ հաստատվել էր նաև այն կարևոր փաստը, որ Երևանում գտնվող թուրքական միսիայի մշտական այցելուներն են եղել գաղտնի գործակալները, այդ թվում տեղի մահմեդականներից հավաքագրված անձինք, որոնք թուրքական կողմին մատակարարում էին տեղեկություններ Հայաստանի ներքին վիճակի և Երևանի մասին: Նաև հայտնվում էր, որ այդ նույն օրերին ապօրինի զենք գնելիս ձերբակալվել է մի ասկյար: Փաստի կապակցությամբ թուրքական ներկայացուցչությունը անվրդով բողոք էր հայտնել՝ պահանջելով վերջինիս ազատել, կարծես թե ոչինչ տեղի չէր ունեցել, սակայն հայկական կողմն այդ կապակցությամբ իր անհամաձայնությունն էր արտահայտել<sup>13</sup>:

ՀԽՍՀ իշխանությունների կողմից անցկացված հետաքննությունից պարզվել էր, որ Երևանի թուրքական ներկայացուցչի տեղակալ Խալիլ Արիֆ բեյը տեղական մահմեդականներից է, որը, բացի իր անմիջական պարտականություններից, զբաղվում է Հայաստանի դեմ լրտեսական-քայքայիչ գործունեությամբ՝ հանդիսանալով թուրքական ներկայացուցչության գործակալական ցանցի ղեկավարը: Խալիլ Արիֆ բեյը անձամբ ղեկավարել է Երևանի և շրջակայքի մասին տեղեկությունների ձեռքբերման գործառույթները և այդ մասին զեկուցագրեր ներկայացրել հյուպատոսին: Եվ չնայած այն

11 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 3, գ. 71, թ. 2-3:

12 Տե՛ս նույն տեղում:

13 Տե՛ս նույն տեղում, թ. 4:

հանգամանքին, որ Խալիլ Արիֆ բեյը ուներ սեփական բնակարան Երևանում, նա մշտապես գիշերել է թուրքական ներկայացուցչության գրասենյակում՝ այն օգտագործելով որպես հավաքատեղի զանազան կասկածելի «հյուրերի», և մասնավորապես գաղտնի գործակալների անխոչընդոտ ընդունելության համար: Նա հաճախակի գիշերները ընդունել է տեղական մահմեդականներին, որոնք վերջինիս ներկայացնում էին Հայաստանի ներքին վիճակի մասին հայթայթվող տեղեկությունները: 1922 թ. մարտի 20-ին զենքի՝ «Մաուզեր» և «Բրաունինգ» տեսակի ատրճանակների ապօրինի գնման ժամանակ Ռամիզ Օսման Օղլի անունով ասկյարի ձերբակալությամբ հայտնի էր դարձել, որ վերջինս գաղտնի գործակալական ցանցի կողմից հավաքագրված լրտեսներից ընդամենը մեկն է: Հայտնվում էր ասկյարի կողմից արված խոստովանության մասին<sup>14</sup>:

Այլ աղբյուրներից հայտնի է դառնում նաև, որ Երևանի թուրքական առաքելությունը Իգդիրից հաճախակի ստացել է ամեն տեսակի աջակցություն: Պարզվել էր նաև 4-5 ասկյարների ուղեկցությամբ գաղտնի Երևան հասցված կասկածելի գումակի տեղաշարժի մասին: Դրանից հետո վերջիններս միսիայի միջոցով գնված զենքը տեղափոխել են Իգդիր՝ առանց ՀԽՍՀ Արտգործողկոմատից համապատասխան թույլտվության<sup>15</sup>:

Հավաստի աղբյուրներից պարզվել էր, որ զենքը գնվել էր տարբեր ազգությունների անձանցից, որոնց թվում եղել են թաթարներ, ռուսներ, ինչպես նաև հայեր: Իսկ նախկին հյուպատոս Լյուֆթի բեյը անձամբ ղեկավարել էր իրեն ենթակա ասկյարների կողմից զենքի ձեռքբերման գործընթացը՝ մշտապես պահպանելով զգուշավորությունը: Հայկական հատուկ ծառայությունները իրենց գործողություններում հենվել են միայն և միայն կոնքրետ փաստերի վրա՝ աշխատելով խուսափել քաղաքական բարդացումների վտանգից և դիվանագիտական քաջքշուկներից: Այսպես, նրանց կողմից պարզվել էր, որ նախկին հյուպատոս Օմար Լյուֆթի բեյի սպասակը երկու ոսկե լիրայի դիմաց ձեռք է բերել «Մաուզեր» մակնիշի ատրճանակ՝ 10 փամփուշտներով: Չեկայի տեղեկանքում նաև արձանագրվում էր, որ իրենց չի հաջողվել պարզել զենքը վաճառողի անձը: Իսկ թուրքական միսիայի վարորդը խորամանկության էր դիմել՝ իր կողմից կրվող «Մաուզեր» մակնիշի ատրճանակը Իգդիր ուղևորության ընթացքում վաճառելով 15 բանկոտով, իսկ Երևան վերադառնալուց հետո գնել էր նոր ատրճանակ՝ «Բրաունինգ» մակնիշի<sup>16</sup>:

ՀԽՍՀ իշխանությունները Երևանում գտնվող թուրքական միսիայի հետ լարված փոխհարաբերությունների մեջ էին: ՀԽՍՀ հակահեղափոխության, զեղծումների, չարաշահումների դեմ պայքարի Արտակարգ հանձնաժողովը՝ թուրքական միսիայի կողմից զենքի ապօրինի գնումների հետ կապված հարցապնդումով դիմել էր ինչպես ՀԽՍՀ արտգործողկոմատին, այնպես էլ մոսկովյան իշխանություններին: Այսպես, Անդրկովկասյան Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ռուսանովը ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շ. Ամիրխանյանին<sup>17</sup> և արտգործողկոմատին ուղղված 1922 թ.

14 Տե՛ս նույն տեղում:

15 Տե՛ս նույն տեղում:

16 Տե՛ս նույն տեղում, թ. 1, 4:

17 **Ամիրխանյան Շավարշ Մեհրաբի** (15.11.1894–26.08.1959): 1920 թ. Մայիսյան խռովության ղեկավարներից

մայիսի 22-ի հեռագրում անդրադառնում էր Մուսթաֆա Քեմալի կողմից հյուպատոսական ծառայություններին տրված նոր հրամանին և հրահանգներին: Դրանք վերաբերում էին Անդրկովկասի, և մասնավորապես Խորհրդային Հայաստանի տարածքում գործելու եղանակներին, որոնք ստեղծված բարդ և անկանխատեսելի զարգացումներով հղի իրավիճակում նոր խնդիրներ էին ստեղծել ՀԽՍՀ իշխանությունների և մասնավորապես հատուկ ծառայությունների համար: Ռուսանովի հեռագրում նշվում էր Մ. Քեմալի նոր հրահանգի բովանդակությունը, ըստ որի՝ մահվան սպառնալիքով խստագույնս կարգադրվում էր ամենասեղմ ժամկետում պարզել Թուրքիայում խորհրդային հյուպատոսական հաստատությունների կողմից ծավալված լրտեսական գործունեության հնարավոր փաստերը: Ռուսանովը Անդրկովկասյան Արտակարգ հանձնաժողովի անունից ՀԽՍՀ իրավասու մարմիններին զգուշացնում էր այն մասին, որ լուրջ դիվանագիտական միջադեպերից և հնարավոր անցանկալի բարդացումներից խուսափելու համար պետք է զգույշ և հաշվենակատ գործել: Նա հրամայում էր, որ ձեռնպահ մնան խորհրդային հյուպատոսական ծառայություններին ու դրանց միջոցով իրենց աշխատակիցներին վարկաբեկիչ և կասկածելի առաջադրանքներ տալուց: Կարգադրվում էր նաև ենթագերատեսչական հաստատություններին ինքնուրույն հարաբերվել Թուրքիայում գտնվող խորհրդային հյուպատոսական ծառայությունների հետ: Սակայն միևնույն ժամանակ, կատարվող աշխատանքների շարունակականությունն ապահովելու նպատակով կարգադրվում էր ՌԽՖՍՀ հյուպատոսական ծառայությունների հետ ունենալիք անհետաձգելի և շտապ խնդիրների դեպքում գործել միայն Անդրկովկասյան Արտակարգ հանձնաժողովի թույլտվությամբ և լիազորությամբ<sup>18</sup>: Ակնհայտ է, որ կարևորվում էր օպերատիվ-հետախուզական աշխատանքների ամեն մի թվացյալ մանրուք, քանզի Հայաստանը գտնվում էր չափազանց խճճված և լարված միջավայրում, որում վխտում էին թուրքական գործակալները:

Իսկ արդեն 1922 թ. օգոստոսի 9-ին ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովին<sup>19</sup> ներկայացված գաղտնի գեկուցագրում Չեկայի նախագահի տեղակալ Մոսի-նովը հաղորդում էր ի տեղեկություն, որ թուրքահպատակների ցուցակում են Երևանում թուրքական միսիայի աշխատակիցներ Հաջիբեկլինսկին և Խադիլ Մամեդ օղլին, որոնք, հայթայթված տեղեկությունների համաձայն, Երևանի բնիկ բնակիչներ են<sup>20</sup> և զբաղվում են լրտեսական գործունեությամբ:

1922 թ. օգոստոսի 22-ին ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շ. Ամիրխանյանը Ժողկոմխորհի արտաքին գործերի բաժնին հաղորդում էր որոշակի տվյալներ լրտեսության մեջ կասկածվող մի Ջուրք մահմեդական ծագման անձանց մասին: Ըստ նրա՝ ոմն Խալիլ բեյ Զուլպբեկով, որը

մեկը: 1921 թ. հունվարից հանդիսացել է Խորհրդային Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահ և այն վարել է մինչև 1924 թ. մայիսը: Տե՛ս **Ասմոնոս րեմբեր** (Ներսիսյան դպրոցի սաներ), Եր., «Հայաստան» հրատ., 1965, էջ 12-14:

18 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 3, գ. 71., թ. 14:

19 1920 թ. դեկտեմբերի 6-ին Հայեղկոմի դեկրետի համաձայն ստեղծվեց ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովը, որը 1921 թ. հունիսից կոչվեց ՀԽՍՀ հակահեղափոխության, գեղծումների, չարաշահության և լրտեսության դեմ պայքարող Արտակարգ հանձնաժողով: 1922 թ. հունիսի 27-ից ՀԽՍՀ ԿԳԿ-ն հաստատել է ԱԿ-ի կանոնադրությունը, որի գլխավոր նպատակներից մեկը դարձավ լրտեսության բոլոր դրսևորումների դեմ պայքարը: Տե՛ս **Մանուկյան Ա.**, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, էջ 83-84:

20 Տե՛ս նույն տեղում, թ. 18:



մինչև պատերազմը եղել է Երևանում, իսկ 1917 թ. հեղափոխության ժամանակ գտնվել Գյանջայում, ընդունվել է մուսավաթական բանակին կից գործող ռազմական դպրոց, սակայն այն կիսատ թողնելով՝ վերադարձել է Երևան: Ամիրխանյանի կողմից ներկայացրած գրությունից պարզ էր դառնում 1921 թ. փետրվարյան իրադարձությունների օրերին նրա ծավալած գործունեության մասին: Այդ ժամանակ Խալիլը և նրա հայրը՝ Ալի բեկը, որն ուներ առևտրական գրասենյակ, կապեր էին հաստատել թուրքական գործակալների հետ: Հայտնվում էր նաև, որ նրա կողմից լրտեսական գործունեության մեջ են ներգրավվել իր երկու եղբայրները, որոնցից մեկը՝ ուն Կազոմ գտնվելիս է եղել Թուրքիայում գինվորական ծառայության մեջ, իսկ մյուս եղբայրը հանդիսացել է Ադրբեջանի ներկայացուցիչը Կարսում<sup>21</sup>:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ՀԽՍՀ հատուկ ծառայությունների կողմից հայթայթված հետախուզական տվյալները վկայում էին Խորհրդային Հայաստանի դեմ ուղղված ադրբեջանաթուրքական մեքենայությունների շարունակման մասին: Բացահայտվում էր այն իրողությունը, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ անփոփոխ է մնացել նրա տարածքային ամբողջականությունը խախտելու և անվտանգությունը խարխլելու Թուրքիայի և Ադրբեջանի նպատակադրումը:

Հարևան երկրում առկա վարչակարգի փոփոխությունից հետո, թվում էր, թե փոխվելու էր նաև Խորհրդային Հայաստանի հանդեպ Թուրքիայի վարած քաղաքականությունը: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ Հայաստանում ոչ խորհրդային վարչակարգի առկայությունը քեմալականների համար սոսկ հարմար պատրվակ էր նրա նկատմամբ վարվող թշնամական քաղաքականությանը կեղծ դասակարգային գունավորում տալու համար: Հայաստանի խորհրդայնացումից հետո Մ. Քեմալի կառավարությունը, որը բարեկամացել էր բոլշևիկյան Ռուսաստանի հետ, թվում էր թե Խորհրդային Հայաստանի նկատմամբ պետք է որդեգրեր միանգամայն նոր՝ բարեկամական մոտեցումներ, ինչին ժամանակին կուրորեն հավաստացել էր հայ թերուս բոլշևիկների մեծամասնությունը: Սակայն շատ շուտով առավել հեռատես և չափավորական հայ բոլշևիկների մի մասը զգաց, որ Թուրքիան ոչ միայն չի փոխվել, այլ քեմալական վարչակարգը երիտթուրքերի ժառանգորդն է, նրանց համաթուրանական ծրագրերի շարունակողը: Իրա լավագույն ապացույցներից էր Թուրքիայի ծավալած լրտեսական-հետախուզական գործունեությունն արդեն՝ Խորհրդային Հայաստանի դեմ: Այսպիսով դեռ Հայաստանի Հանրապետության հռչակման պահից ձեռնարկված Թուրքիայի քայքայիչ-դավադրական գործողությունները շարունակվում էին նաև Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ դրանց մեջ ներգրավելով ադրբեջանական գործակալներին:

**Վանիկ Հ. Վիրաբյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայաստանի Հանրապետության ուժային կառույցների 1918–1920 թթ. գործունեության, մասնավորապես՝ հայոց բանակի և հետախուզության ու հակահետախուզության ձևավորման ու գործունեության անհայտ էջերը:

21 Տես նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 71, թ. 21:

## Summary

### **RECONNAISSANCE AND INSTIGATOR – CONSPIRATORIAL ACTIVITIES OF TURKISH SPECIAL SERVICES IN ARMENIA IN 1920–1922**

Vanik H. Virabyan

**Key words** – Turkey; Armenia; special services; Georgia; military representative; attaché; council; spy; Transcaucasia; Yerevan; Emergency committee.

After the declaration of cease fire between the Armenian republic and Turkey in November, 1920, the representation of the Command of Eastern Front of Turkey's Grand National Assembly that had political functions was formed in Yerevan. It continued to operate also after the establishment of Soviet system until September 1923 when the consulate was reorganized. Turkish consulate service also existed in Alexandrapol which started to operate after the compulsory withdrawal of Turkish army. Here, too, Turkish consulate was conducting spy- corrosive activity.

RSFRS's Soviet reconnaissance bodies in Transcaucasia were interested in revealing Turkey's operations. It's important to state that the representation of Turkish consulate operated especially more indecently during anti-Soviet rebellion in February 1921 headed by ARF. During that period Soviet-Turkish talks were underway where Armenia had great part in issues under discussion: there was also the issue of ASSR's participation in the conference. The comparison of the facts shows that the creation of chaotic and messy situation in Armenia was beneficial for Turkey and its special services. Thus, Kemal's Turkey by taking advantage of its representation in Armenia's territory conducted spy- corrosive activity through his consulate service and spy-agent network swarming around it, that's why both Soviet Armenian and Russian reconnaissance bodies during 1920–1922 took some countermeasures. Namely, Russia created its agent network in Armenia with which perhaps the Armenian Soviet reconnaissance services coordinated their actions.

Turkish consulate representation that acted in Soviet Armenia often violated the rules, its officials assaulted Armenia's security which made the Armenian government undertake tough measures against Turkish representation. All these factors made Soviet Armenia and Expert's Committee of Foreign Affairs declare the representative of Turkish government in Yerevan Bahhadin as persona non grata (a person who doesn't enjoy grace) and on this basis the latter was dismissed from the council's office. Thus, reconnaissance data obtained by ASSR's special services states that Turkish-Azerbaijani plottings continued after Armenia's Sovietization. They elucidate Turkey's and Azerbaijan's objectives to undermine the security of Soviet Armenia through spy- corrosive activity.

## РАЗВЕДЫВАТЕЛЬНАЯ И ПРОВОКАЦИОННО–ЗАГОВОРЩИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ТУРЕЦКИХ СПЕЦСЛУЖБ В АРМЕНИИ В 1920–1922 ГГ.

Ваник Г. Вирабян

**Ключевые слова** – Турция, Армения, спецслужбы, Грузия, Тифлис, представительство, сведение, военный представитель, атташе, консул, шпион, Закавказье, Ереван, Чрезвычайный комитет.

После заключения перемирия между Республикой Армения и Турцией в ноябре 1920 г. в Ереване было создано представительство командования восточного фронта Великого национального собрания Турции, выполняющее политическую функцию. Оно продолжало действовать и после установления советской власти вплоть до сентября 1923 г., когда было преобразовано в консульство. В Александрополе также существовала турецкая консульская служба, которая начала действовать после принудительного удаления оттуда турецких войск. Здесь тоже турецкое консульство занималось шпионско–разлагательной деятельностью.

В выявлении разведывательной деятельности, развернутой Турцией были заинтересованы советские разведывательные органы РСФСР в Закавказье. Важно отметить, что турецкое консульское представительство развернуло бурную деятельность особенно во время возглавляемого АРФ (Дашнакцутюн) Февральского восстания 1921 г. Именно в это время в Москве проходили советско–турецкие переговоры, в обсуждениях на которых Армения занимала важное место, и существовала также проблема участия в этой конференции Армянской ССР. Из сопоставления фактов становится очевидным, что создание в Армении хаотической и беспорядочной ситуации была весьма выгодна Турции и ее спецслужбам. Поэтому кемалистская Турция, воспользовавшись своим присутствием на территории Армении, через консульскую службу и кишашую вокруг нее шпионско–агентурную сеть развернула заговорщическо–разлагательную деятельность, для противодействия которой разведывательными органами как Советской Армении, так и России в 1920–1922 гг. были предприняты определенные контршаги. В частности, Советская Россия создала в Армении свою агентурную сеть, с которой армянские советские спецслужбы, вероятно, согласовывали свои действия.

Турецкое консульское представительство, действующее в Советской Армении, часто нарушало законы, его должностные лица посягали на безопасность Армении, что вынудило армянские власти предпринимать жесткие меры в отношении турецкого представительства. Все эти обстоятельства и заставили правительство и Наркомат иностранных дел Советской Армении объявить представителя турецкого правительства в Ереване Баххадина персоной нон грата, и на основе этого он был освобожден от занимаемой им должности

ՀԻՇՆՂՂՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայաստանի պատմություն, 2018

ՀՀ Կառավարության հանձնարարություն

консула. Таким образом, разведданные, добытые спецслужбами Армянской ССР, подтверждают, что турецко-азербайджанские манипуляции продолжались и после советизации Армении. Они высвечивают истинную цель Турции и Азербайджана – шпионско-разлагательной деятельностью нарушить и расширить безопасность на этот раз уже Советской Армении.

## REFERENCES

1. **Anmorac demqer** (Nersidyan dproci saner), Yerevan, «Hayastan» hrat., 1965, p. 12-14 **(in Armenian)**
2. **Esayan A.**, Hayastani mijazgain-iravakan drutyuny. 1920-1922, Yerevan, «Mitq» hrat., 1967, p. 400 **(in Armenian)**
3. **Ganin A. V.**, Ot voenpreda tovaricha Sitina (“Sovetskaya voennaya razvedka v Gruzii o Belom Krime”), «Rodina», 2014, № 5, p. 132 **(in Russian)**
4. **Ganin A. V.**, Korpus oficerov Generalnogo shtaba v godi Grajdanskoj voini: Spravochnie materialy, Moskva, «Russki Put», 2009, pp. 353, 445, 662 **(in Russian)**
5. **Ganin A. V.**, Sovetskaya voennayarazvedka v Gruzii v 1920-1921 godax. Missiya Pavla Sitina. Te’s Gosudarstvennoe upravlenie. «Elektronii vestnik». 2014 g., april, № 43, p. 209 **(in Russian)**
6. **Hayastani Azgain archive** (aynuhetev` HAA), f. 114, c. 4, g. 21, t. 45 **(in Russian)**
7. **HAA**, f. 112, c. 3, g. 71, t. 2-3 **(in Russian)**
8. **HAA**, f. 112, c. 3, g. 71., t. 14 **(in Russian)**
9. **HAA**, f. 113, c. 3, g. 71, t. 21 **(in Russian)**
10. **Hatikyan H.**, Arevmtahayutyuny Osmanyany kaysrutyan gaxtni carayutyunneri tirsxwum. 1878-1923, Yerevan, «Tigran Mec» hrat., 2016, pp. 225-254 **(in Armenian)**
11. **Manukyan A.**, Qaxaqakan kyanqy Hayastanum 1920-1940 tt., Yerevan, HH GAA «Gitututyun» hrat. 2002, p. 83-84 **(in Armenian)**
12. **Sargsyan A. E.**, **Hetaxuzutyun ev hakahetaxuzutyun. Haykakan hetq** (kensagrakan aknarkner hetaxuzyneri ev hakahetaxuzyneri masin, Yerevan, «Amaras» hrat. 2005, p. 219 **(in Armenian)**
13. **Virabyan A.**, HXSH Artakarg handznajogovi texekatvakan gorcuneutyuny 1921 t. hulis-dektember jamanakachrganum, «Banber Hayastani archivneri», 2017, № 125, p. 130 **(in Armenian)**
14. **Virabyan V. H.**, Hayastani Hanrapetutyun petakan anvtangutyun hamakargi stexcumy ev gorcuneutyuny 1918-1920 tt. (hetaxuzutyun, banak, NGN), Yerevan, EPH hrat., 2015, pp. 112-253, 466-673 ev ayln **(in Armenian)**